ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋԵՎ՝ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհուրդը (այսուհետ՝ Կողմեր),

բարձր գնահատելով գիտության և տեխնոլոգիաների ոլորտում հայ-իտալական համագործակցության ներկայիս մակարդակը և

ցանկանալով խթանել համագործակցության ծրագրերի իրականացումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված I
Նպատակը

1. Սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում Կողմերը կնպաստեն իրենց երկրների գիտական համայնքների միջև համագործակցությանը:

2. Սույն Փոխըմբռնման հուշագրի նպատակն է զարգացնել և ամրապնդել գիտնականների և գիտահետազոտական խմբերի միջև գիտական համագործակցությունը՝ ապահովելով սարքավորումների համատեղ օգտագործումը:

3. Կողմերը կխրախուսեն գիտական տվյալների և տեղեկատվության փոխանակումը և փոխադարձաբար կաջակցեն հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացմանը:

4. Կողմերը կխրախուսեն գիտական անձնակազմերի փոխանակումը՝ նախապատվություն տալով երիտասարդ գիտնականներին:

Հոդված II
Համագործակցության իրականացման ձևերը

1. Կողմերի միջև համագործակցությունը կիրականացվի հետևյալ ձևերով.

a) համատեղ հետազոտական ծրագրեր,

b) համատեղ գիտագործնական հանդիպումներ, սեմինարներ, գիտաժողովներ:

2. Համագործակցության այլ ձևեր կարող են իրականացվել Կողմերի կողմից հաստատվելուց հետո:

3. Կողմերը կհամակարգեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ գիտական նախագծերի իրականացումը յուրաքանչյուր դեպքի համար՝ իրենց համապատասխան ֆինանսավորման մեխանիզմների համաձայն:

4. Համագործակցության յուրաքանչյուր ձևի մանրամասները և Համագործակցության ծրագիրը կսահմանվեն Կողմերի կողմից: Կողմերը կվերանայեն յուրաքանչյուր Համագործակցության ծրագիրը առնվազն երկու տարին մեկ անգամ:

Հոդված III
Ֆինանսական հարցերը

1. Սույն Փոխըմբռնման հուշագրով նախատեսված գործունեությունը կիրականացվի Կողմերի կողմից՝ իրենց բյուջեի հնարավորությունների շրջանակում՝ առանց Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության պետական բյուջեի համար լրացուցիչ ծախսեր առաջացնելու:

2. Յուրաքանչյուր կողմ իր երկրում կհոգա մասնակցող հետազոտողի մասնակցության հետ կապված ծախսերը: Ծրագրերը, գիտագործնական հանդիպումները և համագործակցության այլ ձևերը կսահմանվեն յուրաքանչյուր երկու տարին մեկ նոր Համագործակցության ծրագրում՝ պայմանավորված յուրաքանչյուր Կողմի բյուջեի հնարավորություններով:

Հոդված IV
Կանոնակարգերի պահպանումը

Մասնակցող գիտնականները ենթարկվում են ընդունող երկրի օրենսդրությանը և հյուրընկալող հաստատությունների կանոնակարգերին:

Հոդված V
Մտավոր սեփականությունը

1. Կողմերը, իրենց պետությունների ազգային օրենսդրության համաձայն, համագործակցության ընթացքում ձեռք բերված գիտական և տեխնիկական տեղեկատվությունը հասանելի կդարձնեն համաշխարհային գիտական հանրությանը տեղեկատվության տարածման ընդունված ուղիներով:

2. Սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում համագործակցային գործունեության իրականացման ընթացքում ստացված կամ փոխանցված մտավոր սեփականության վերաբերյալ հարցերը կսահմանվեն Համագործակցության ծրագրով, եթե Կողմերի գրավոր համաձայնությամբ այլ բան չսահմանվի:

Հոդված VI
Այլ դրույթներ

1. Սույն Փոխըմբռնման հուշագրով չնախատեսված վարչական ընթացակարգերը և համագործակցության իրականացման մանրամասներն առանձին կսահմանվեն Համագործակցության ծրագրերով կամ Կողմերի միջև հաստատված նամակագրությամբ:

2. Սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթները կկիրառվեն Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության օրենսդրության համաձայն,

ինչպես նաև կիրառելի միջազգային իրավունքի նորմերին, այն միջազգային կազմակերպությունների շրջանակներում պարտավորություններին համապատասխան, որոնց անդամ են Կողմերը, իսկ իտալական կողմի համար՝ Եվրոպական միությանն անդամակցությունից բխող պարտավորություններին համապատասխան:

Հոդված VII
Ուժի մեջ մտնելը, փոփոխությունները, դադարեցումը

1. Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ կմտնի ստորագրման պահից և կգործի չորս տարի ժամկետով: Յուրաքանչյուր Կողմ կարող է գործողության ժամկետի ավարտից առնվազն վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցել այն դադարեցնելու իր մտադրության մասին, որի դեպքում ընթացքի մեջ գտնվող Համագործակցության ծրագիրը կշարունակի գործել մինչև ավարտը: Սույն Փոխըմբռնման հուշագրի գործողության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա չորսամյա ժամանակաշրջաններով՝ Կողմերից որևէ մեկի կողմից գործողության դադարեցման մասին ծանուցման բացակայության դեպքում:

2. Կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ սույն Փոխըմբռնման հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ: Նման փոփոխություններն ուժի մեջ կմտնեն սույն հոդվածի 1-ին կետի համաձայն:

3. Սույն Փոխըմբռնման հուշագրի կիրառման ընթացքում առաջացած ցանկացած վեճ կլուծվի բարեկամաբար՝ Կողմերի միջև ուղղակի խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Կատարված է Երևան քաղաքում 2018 թվականի հուլիսի 31-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, իտալերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում ծագած տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ՝	**ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ՝**